

Կ-054-06.07.2017,11.09.2017-ՊԻՄԻ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 26-ի ՀՕ-229 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 1) 5-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած» բառերը փոխարինել «միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած» բառերով.
- 2) 5-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1) 4-րդ մասում «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «30 օրվա ընթացքում» բառերով», իսկ «Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերը փոխարինել «դատական կարգով» բառերով.
- 2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

- 1) վերնագրից հանել «և բողոքի» բառերը.
- 2) 1-ին մասի առաջին պարբերությունում «անհրաժեշտ փաստաթղթերի հետ, դիմումը (սույն օրենքի 5-րդ հոդված) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը փաստաթղթերն» բառերը փոխարինել «հայցողի դիմումը» բառերով, իսկ «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով.
- 3) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «3 ամիս» բառերը փոխարինել «6 ամիս» բառերով.
- 4) 2-րդ մասում «ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից» բառերը փոխարինել «որոշմամբ» բառով.
- 5) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Լիազոր պետական մարմնի» բառերով.
- 6) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի» բառերը փոխարինել «Օտարերկրացիների» բառով.

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «միջնորդությամբ դադարել» բառերը փոխարինել «որոշմամբ դադարեցվել» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդված 1-ին մասում «մարմինն առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերը փոխարինել «մարմինը որոշում է ընդունում» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ գլխի ուժի մեջ մտնելու օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Comment [a1]: Վերնագրից հանվել է «և լրացում» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով կատարվում են միայն փոփոխություններ:

Հոդված 1. «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 26-ի ՀՕ-229 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

1) 5-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած» բառերը փոխարինել «միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած» բառերով:

2) 5-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինել «30 օրվա ընթացքում» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության նախագահին» բառերը փոխարինել «դատական կարգով» բառերով:

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) վերնագրից հանել «և բողոքի» բառերը:

2) 1-ին մասի առաջին պարբերությունում «անհրաժեշտ փաստաթղթերի հետ, դիմումը (սույն օրենքի 5-րդ հոդված) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը փաստաթղթերն» բառերը փոխարինել «հայցողի դիմումը» բառերով, իսկ «մեկամսյա» բառը փոխարինել «եռամսյա» բառով:

3) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «3 ամիս» բառերը փոխարինել «6 ամիս» բառերով:

4) 2-րդ մասում «ներկայացմամբ և Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից» բառերը փոխարինել «որոշմամբ» բառով:

5) 4-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահի» բառերը փոխարինել «Լիազոր պետական մարմնի» բառերով:

6) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի» բառերը փոխարինել «Օտարերկրացիների» բառով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «միջնորդությամբ դադարել» բառերը փոխարինել «որոշմամբ դադարեցվել» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդված 1-ին մասում «մարմինն առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին» բառերը փոխարինել «մարմինը որոշում է ընդունում» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ գլխի ուժի մեջ մտնելու օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N°	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	«Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրից հանել «և լրացում» բառերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով կատարվում են միայն փոփոխություններ:	Նախագծի վերնագրից հանվել է «և լրացում» բառերը:	Ընդունվել է: